

## ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՔԱՆՉԵԼԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հայ մատենագրության պատմությունը հայ ազգի մշակույթի մի բաղկացուցիչ մասն է: Եթե չլիներ այն, մենք դժվար թե գաղափար ունենայինք մեր ազգի պատմության վերաբերյալ:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արշակ Մադոյանի «Խորհուրդներ և պահանջելի» (Երևան, 1999, 160 էջ) գիրքը նվիրված է հայ մշակույթի այդ բնագավառի ուսումնասիրությանը: Հեղինակն ընտրել է հայ մատենագրությունը և նրանում եղած գաձերը հանրամատչելի ձևով ունենալիք ներկայացնելու իր եղանակը:

Հայ մատենագրության պատմության վերաբերյալ ընդհանրապես գրվել են բազմաթիվ աշխատություններ: Հրատարակվել են նշանավոր հայագետներ, Միաթարյան միաբաններից Գարեգին Զարրիմանյանի «Պատմություն հայերեն դպրությանց» (Վենետիկ, 1865), Մանուկ Աբեղյանի «Հայոց հիմ գրականության պատմություն» երկարաժամկետ աշխատությունը (Երևան, 1968), Առաքել Առաքելյանի «Հայ ժողովոյի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» (Ե., թ. 1, 1959, թ. 2, 1964), Երևանի պետական համալսարանի հրատարակած «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» (Ե., 1976) և այլ աշխատություններ: Սակայն դրանք գիտական բնույթը ունեն: Պրոֆեսոր Ա. Մադոյանի աշխատանքը տարբերվում է վերջիններից իր գիտահամարամատչելի բնույթով: Ա. Մադոյանի աշխատանքը ոչ միայն վերաբերում է մատենագիրներին, այլև համառոտ ձևով ներկայացվում է մի ամբողջ ժամանակաշրջանի (ակզրից մինչև ԺԼ դար) պատմությունը և քնարերգությունը: Ուսումնասիրությունը չնայած հակիրճ է, բայց անդրադառնում է զյուավոր հարցերին: Սկսում է Հայկ Նահապետից, հայոց լեզվից, Գողթան մասումներից, «Սամատմից», գրում է V-XVIII դդ. հեղինակների մասին: Այս գործիչների պատկերը գծագրելիս երբեմն տրվում են նաև բնագրեր, որոնք դաստիարակչական նշանակություն ունեն երիտասարդ մերնորդ համար:

Ա. Մադոյանը ոչ միայն վերլուծում է տվյալ հաղինակների ստեղծագործությունները, այլև արժեքավորում դրանք և ներկայացնում նյութը: Արտաքուստ պարզ թվացող նյութի հետ մատուցվում են դոր խորքային շերտերը, թե արդյոք այդ մատենագիրները որտեղից են գալիս և ո՞ւ են գնում:

Ա. Մադոյանը գլխավոր հարցերը բացահայտելիս շեշտում է այն նորը, որ բնույթը է այս կամ այն դարաշրջանի մատենագիրը: Այս իմաստով զգայի աշխատանք է կատարվել հայոց լեզվին նվիրված բաժնում: Մի քանի գծերով ներկայացնելով մեր հիմ, բայց հարուստ բառապաշտով լեզուն, Ա. Մադոյանը բերում է հայոց քրիստոնեական ժամանակաշրջանում ստեղծված գիրը, իմաստավորում այն: Իր տեսակետը հիմնավորելու համար մատնանշում է ԺԵ դարի բանաստեղծ Առաքել Սյունեցու՝ հայոց լեզվի մասին կարծիքը. «Նախ, որ մեր լեզուն ընդարձակ է, քան

բոլոր այլազգիներինը, մեկը լեզվի ծայրով է խոսում, և մեկը՝ միշին մասով, մեկը՝ տակով, իսկ մերոնք՝ տակով, մեջտեղով և ծայրով: Այդ պատճառով օտարերը մեր լեզուն սովորելիս չեն կարող մնան նման ուղիղ խոսել: Իսկ մենք բոլորի լեզվով խոսում ենք՝ ինչպես նրանք, որովհետև կարող ենք խոսել երեսն թավ, երբեմն՝ սոսկ, երկայն և սոտ, քամի որ մեր գրերի մեջ կա երկայն և սոտ, թավ և սոսկ, և դրա համար մեր տառերը շատ են» (Էջ 26) «Միշնադարում հավատացել են,- գրում է նա,- թե հայոց այբուբենը կատարյալ է ոչ միայն նրանով, որ լիովին արտացոլում է լեզվի հարուստ հնչյունաշարը, այլև՝ խորհրդանշական կառուց ունի, ամփոփում է տիեզերքի պատկերը» (Էջ 26):

Ա. Մադրյանը բարձր է գնահատում նաև մեր պատմահոր՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատությունն ու հիմնավոր եզրակացություններ անում: Հանճարենից միշտ էլ կարելի է սովորել և օրինակ վերցնել:

Միշնադարի համարեղ քնարերգու Գրիգոր Նարեկացուն Աերկայաց Աելիս իմաստավորում է նրա կատարածը, տալիս ժամանակաշրջանի ամբողջ պատկերը, գրում է Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցու, Անիի Բուշարձանների և Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» մասին և համեմատում այդ արժեքները իտալական Վերածննդի ժամանակաշրջանում ատեղծված գործերի հետ: Նա Աերկայացնում էր «...բնության կախարդիչ պատկերները, մարդկային հոգու թոփշքը, անկումներն ու ապրումները, նոր ովտով դրսևորելով գեղեցիկն զգալու, ըմբռշխնձոր, իմաստավորելու մարդու կարողությունը»:

Միշնադարի մեծ քնարերգու Ներսես Շնորհալու մասին գրելիս հեղինակն անդրանում է պատմական բնույթի համելուկներին, որոնց բնորոշ էին նրանց սուեղծման «դասական տիպը»:

Միմեռն Լեհացի (1584-1635) պատմագրի մասին գրելիս անդրադառնում է լեհական գաղութին, Հռոմի Պապին և նրա իշխանության տակ գտնվող Բոգնոր անձանց:

Գիրքն ավարտվում է Միխիթար Սեբաստացի գործչի գնահատականում:

Գիրքը նվիրված է Արցախի խորհրդարանի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի և Արցախյան պատերազմում զոհված բազմաթիվ ազատամարտիկների հիշատակին:

Մատենագրության պատմության ուսումնասիրությունը, անշուշտ, ունի ճանաչողական, դաստիարակչական նշանակություն:

Գիրքը նախատեսված է զուականագետների, ինրան և ուսանողների ու բարձր դասարանների աշակերտների համար: